**Հարց** Ինչպե՞ս է սահմանվում Արցախի Հանրապետության տարածքում գործող խոշոր ՀԷԿ-երից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագինը:

**Պատասխան** էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրող խոշոր (30 ՄՎտ-ից ավելի տեղակայված հզորություն ունեցող) հիդրոէլեկտրակայանների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները հաշվարկվում են Հանձնաժողովի 2008 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 53 N որոշմամբ սահմանված մեթոդիկայի համաձայն: Սակագների հաշվարկման գործընթացը ներառում է ընկերությունների տարեկան անհրաժեշտ հասույթի մեծության հաշվարկ և ծախսերի վերլուծություն, դասակարգում, սակագների կառուցվածքի ընտրություն և սակագնային դրույքների հաշվարկ: